

ՍՐՏԻ ԽՈՍՔ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՈՒՍՈՒՑՉԻՍ

Ի՞նչ դժվար է այսօր իմ բանաստեղծ ուսուցչի կոտրված սրտի համար սրտի խոսք ասել: Մանավանդ որ նա եղավ իմ պատանեկության իդեալը, երբ Մելքոնյան կրթական հաստատության համարների տակ ուսուցիչներս նորանոր բացում էին մտքիս ու հոգուս աչքերը դեպի Գեղեցիկը, Բարին և Ազնիվը: Հիշում եմ, հայոց լեզվի և գրականության դասերին նա շարադրություններ էր տալիս մեզ գրելու «ազատ նյութով»: Երբեք մտքիցս չէր անցնի, որ մի օր, տարիներ հետո, իր մասին եմ գրելու իր հետմահու հանձնարարությամբ:

Այսօր, երբ դասավանդում եմ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում, իմ և ուսանողներիս միջև կանգնած է Վահրամ Մավյանի պարթևահասակ, ալևվազարմ հայի կերպարը համով-հոտով իր բանաստեղծություններով:

Մելքոնյանցիներից շատերս երբ մեր չարչարված քայլերը հետագայում կարոտով դեպի հայրենիք ուղղեցինք, մեր այդ որոշման շարժիչ ուժը, անտարակույս, Մավյանի «Գընա՛, ընկեր» բանաստեղծությունն էր, որ այնքան ոգևորած էր մեզ:

ԳՆԱ՛, ԸՆԿԵՐ...

Գնա՛, ընկեր, կսպասե քեզ հայրենի հողը մեր,
Դուն՝ բախտավոր, երջանիկ, դառնութենեն ետք անհուն,
Զոր ափերուն վրա օտար կրեց հոգիդ տարիներ.
Հողին՝ որուն աչվընեռդ միշտ մնացին սևեռուն:

Գնա՛, ընկեր, պանդուխտի թո՛ղ տրտմությունդ այստեղ,
Աչքերուդ մեջ տա՛ր խորունկ մեր կարոտները հայու,
Թող բաբախե սիրտդ հոն երգով մը նոր, սիրապեղ,
Եվ չքանա թող հոն չար մարդոց ստվերն ահարկու:

Գնա՛, ընկեր, և ի՞նչ փույթ, վաստակդ այստեղ թե մնա,
Տա՛ր միասին բպուկներդ հուժկու և կամքդ աննկուն,
Ու պատռե կուրծքը հողին մեր սրբական պապերուն:

Գնա՛, ընկեր, և գիտնան թող ալ մարդերը բոլոր,
Թե մենք ճրագն ենք այլևս հարապատ մե՛ր տուներուն,
Եվ իբրև սյուն կպահենք մե՛ր կառույցները կանգուն:

Այդ կառույցների նման ինքն էլ կանգուն է առջևս: Ու մարդ զարմանում է, թե այդպիսի մարդիկ ինչպե՞ս կարող են մեռնել: Եվ մարդ զարմանում է, թե ինչպե՞ս մարդիկ կարող են հարության չհավատալ, մանավանդ այդպիսի մարդկանց:

1961 թվականին, երբ Վահրամ Մավյանի ղեկավարությամբ Մելքոնյան վարժարանում «Այդ» ուսանողական պարբերականն էինք խմբագրում, հիշում եմ, այնքան տարված էի 1956 թվականին Երուսաղեմում նրա լույս ընծայած «Համեցող վերադարձ» քերթվածների գրքույկով, որ հինգ անգամ մեքենագրել եմ այն ու տարածել «Մավյանականներին»:

Մավը, ինչպես կոչում էինք նրան, իր խոսվածքի և քայլվածքի մեջ Երուսաղեմի ջնորհաբույր կնիքն ուներ, Երուսաղեմ, որ այնքան գեղեցիկ է բնութագրել նա իր մեկ քերթվածում.

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Մոռնալ ինչպե՞ս քեզ՝ նույնիսկ երբ տարիներ վերջ հիմա՝
Ա՛լ կաղոտի օրե-օր դեմքիդ պատկերը հստակ,
Կտրտմի կանչն ալևոր վանգակներուդ հեռակա,
Եվ անբույր՝ ծուխն է խունկին, բուրվառներուդ հևքին տակ:

Մոռնալ խորհուրդը ինչպե՞ս տաճարներուդ սրբական,
Որոնց լույսին մեջ վարթ իմ մանկությունն առավ թև,
Եվ ճամփաներըդ, որոնք դարերու հետքն ունին արդ,
Գողգոթայեն երկարող՝ հարության հույսը մինչև:

Երուսաղե՞մ, հոգվույս մեջ տակավին ջունչն է ծփում՝
Քու քարերուն ու հողին և ջուրերուն՝ որոնց վրա,
Գերագույն Սերն աշխարհի դըրավ դրոշմն իր անհուն:

Երուսաղե՞մ, մարդկային խիղճին վկան մեծագույն,
Ժամանակին դեմ բացվող խորունկ վերքի մը նման,
Ուրկե արյունն Հիսուսի կկաթկըթի դեռ՝ անձայն:

Վահրամ Մավյանը Դեր-Զոր տեսած քահանայի վավակ էր: Մենք այդ այն ժամանակ չգիտեինք: Բայց իր մեջ տեսնում էինք մեր Արշակունիների, Բագրատունիների իշխանական կեցվածքը, արյան հայրենասիրությունը, որը ճառերի և քարոզների կարիք չունի փոխանցվելու համար:

Այսօր նա չկա, ու ես չեմ կարող հաշտվել: Իր քերթվածների փոքր հատորը առջևս, որը շատ քչերին է ծանոթ, մտածում եմ, թե նա ինչքա՞ն անտիպ գործեր տարավ իր հետ և դեռ ինչքա՞ն բան լռեց իր վշտաբեկ սրտի վերջին վարկի հետ: Ու չեմ կարող այստեղ, սիրելի՛ Վահրամ (թույլ տուր առաջին անգամ միայն անունովդ կոչել քեզ), չմեջբերել քո «Հավիտենական բաժանում»-ը՝ քեզ համար, քեզ սիրողների համար, մեզ համար գրված:

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Այս գիշեր ես ու դուն սգավոր, առանձին,
Կհսկենք դագաղին վրա մեծ մեր սիրույն.
Դուն կուլաս, կձեղքե սիրտս ցավ մ'երկուքի:

Ոչ մեկ բառ դեմն անոր կիսաբաց աչքերուն,
Որոնց մեջ վառեցինք երակներն օր մը մեր.
Հուպումով երբ վանոնք կփակենք հիմա մենք:

Ու կիյնան պահ մը թաց մեր աչքերն իրարու,
Բերելով քաղցրությունն անցյալի մը անդարձ.
Կմեկնինք հետո լուռ՝ մենք հավետ բաժանված:

Այս գիշեր ես ու դուն սգավոր, առանձին,
Կտանինք մեկի հետ ցավ մը նոր, անբաժան.
Սիրտերուն մինչ արդեն տերն է Մեծ Բացական...,

Այո՛, դու մեր սրտերի Մեծ Բացական ես, սիրելի՛ ուսուցիչ:

Համալսարանի տարիներիս, երբ ես խարխափում էի օտար և օտարացնող գաղափարների հորձանուտի մեջ, ճանապարհս խաչաձևեցիր ու ինձ ասացիր. «Փանո՛ս, արմատներո՛դ վերադարձիր»:

Վերադարձա: Այսօր, տարիներ հետո, քեզ, քո էությունը ավելի լավ եմ հասկանում: Եվ թերևս քո էութենից մի բան, սուրբ հաղորդության նման, մտել է ի՛մ էության մեջ, այլապես ինչո՞ւ աղոթքի նման միշտ կրկնում եմ քո «Անդրադարձ»-ի եզրափակիչ տողերը.

«Անթառամ խունկի համ հոգիներ,
Ուր խաչին վրա անձայն, վիրավոր,
Կմեռնի Աստված քիչ մ'ամեն օր»:

Ես հավատում եմ սրբերի հաղորդության և հավատում եմ, որ դու մեր Մեծ Ներկան ես մնալու մշտապես: Թույլ տուր քո հոր և մեր լուսատես պապերի հավատքով հուսալ, որ «մյուս ափերում» կհանդիպենք կրկին, դու՝ հայ ժողովրդի արժանավոր կավակը, և ես՝ քո ուսանող վարդապետը, որի համար կարծես հատկապե՛ս հղացել ես «Աղոթքդ».

ԱՂՈԹՔ

Տե՛ր, շնորհե իրեն կյանք, ճամփուն վրա երապին,
Թող ոչ մեկ ցավ գա տանջել հոգին անոր՝ գիրկին մեջ
Օտարության, երբ դառնան դեմքերն անոնց՝ որ առին
Օր մը հասակ միասին, եղան արցունք, եղան սեր:

Տե՛ր, շնորհե իրեն կամք, խանդ ու կորով անսպառ,
Որ հոգիին հնքն իսկույն, վայրկյաններուն իր անել,
Գիտնա փոխել նվագի. որ պահերուն իր մինակ,
Սիրտն իր կգա ավելի՛ լեցված շունչով մը ընտել:

Ու հոգին, Տե՛ր, որ այսօր իրն է, պահե՛ անվընտանգ,
Պահե ամբողջ տակավին քամիներուն դեմ վաղվան.
Հավատավոր, հեռագնաց ըրե քայլերն իր պարման:

Իսկ երբ նետե ժամանակն օր մը ստվերն իր դաժան,
Տե՛ր, հեռացող սա տղուն խենթ աչքերուն, հոգվույն մեջ,
Մնա թող միշտ հավատքի իր բոցեն շող մը անշեջ:

«Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմ» սիրելի՛ Վարդապետ՝ սիրելի՛ Վահրամ.
ցտեսություն...

ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՉԱՔԱԼՅԱՆ